

յայտման տեսնողները կը զարմացնեն : Այս միացորդ հնութեանց մէկ մասը կ'երեւի դատարանի ետեւի կողմը եղած տաճարին արտաքին պարսպին մէկ անկիւնը , որոյ չորս հինգ կարգ անարդիլ քարերը յայտնի կը ցուցնեն հնութիւնը . ամեն մէկ քարին երկայնութիւնն է 15 թիւ : Հրեայք հոս կու գան խումբ խումբ և գիրքերը ձեռուընին աղօթելով ու գլուխնին պարսպին կը թնցընելով ու շատ անգամ ալ զարնելով կու լան ու կ'աղօթեն , յիշելով իրենց ազգին նախնի փառաւորութիւնը եւ արդի թշուառութիւնը :

* * *

Վիճակագրական հաշիւներէն ի մացուած է որ Վաղղիոյ մէջ 1850 էն մինչեւ 1860 , տարուէ տարի մօտ հազար հոգւոյ չափ կեանքերնին կը կորսնցընեն կրակէ այրուելով : 1860 էն ի վեր կանանց հագուստները այն աստիճան լայնութիւն և ընդարձակութիւն ստացած են , որ իրաւունք կու տան մարդոյս հաւատալու թէ , կրակէ այրողներուն թիւը օրէ օր աւելի շատցած են քան թէ քիչցած : Հասոնց ի վեր դիտած են գիտնական մարդիկ որ ամենաթեթեւ կերպով բռնկող կազը անմիջապէս կը դադրի իւր բոցը հաղորդէն այն Գօլալը կը տալին , երբ Գօլային մէջ աղային նիւթ մի խառնած ըլլայ . օրինակի համար անուշադրի փոսփոր , օշնանի (ալբալի) թունկոգադ⁽¹⁾ , փոսփորաթթու աղ⁽²⁾ , և բորաքս⁽³⁾ և ուրիշ ասոնց նման հանքային ստտաներ կամ աղեր : Եւ խիստ գիւրին է գործածելը . հարիւր տրամ բորաքս մէկ լիտր ջրի մէջ կը լուծուի , որոյ 12 մասը պաղ և 3

մասը եռացեալ պէտք է ըլլայ : Եւ թրջէ այս ջրով թէ պատուհանի վարագոյրները և թէ թեթեւ հագնելիք հագուստներ որոնք գիւրակիղու թենէ կը պահպանուին :

Նախորդ ամսոյս 23 ին Հալէպու կողմէն մեծարգոյ և աղքատէր Յ. Ս. Վիւրքճիանօթի միջոցաւ Սարաշի պատանի մի խրկուելով Յակոբ մահտեսի Գրիգոր Սընչերեան անունով , ընդունուեցաւ ի շարս աշակերտաց յառանգաւորաց Գարուցիս յետ օրինաւոր բժշկական քննութեան , որոյ վկայագիրն է հետեւեալը : Յիշեալ պատանին թէեւ Սարաշի ժողովրդոց կողմէն ի պաշտօնէ խրկուած չէ , բայց Ս. Մթողա իբր ի պաշտօնէ ընդունելով՝ կը փութայ յայտնել , որպէս զի ուրիշ աշակերտացու ըստ հրահանգին խրկելու հոգ չտանին :

ԹԻՒ 15

Ամենապատիւ Սրբազան Հայր :

Ըստ հրամանի ձեր բարձր Սրբաշնութեան և բոսկանի Ս. Մթողա Սարաշի Յակոբ Գրիգոր Սընչերեան յառանգաւորաց Գարուցի աշակերտացու նախկ պատանին ըստ բժշկական օրինի քննելով , բնական կազմուածքը լաւագոյն , ժառանգական և աստղական յախտէ ըստ ամենայնի աղատ ըլլալուն ներկայս ստորագրելով կը վկայեմ :

1866 Յունիս 25 : Գ. Աւետիս
Ի խն. որոյ Յալիքեանց : Ս. Տեղեմեանց :

ԶՈՒԱՐՃԱԼԻ ԱՌԱԿԻ

Երբ յամանակաւ որմնադրին մէկը բարձր տեղ մի աշխատած ժամանակ յանկարծ վար կը գահաւիժի կ'ինկնի խեղճ մարդու մի վերայ որ հոն նըստած էր : Որմնադիրը թէպէտ թեթեւ վերք մի առաւ , սակայն տակը մնացողը խիղջ մեռաւ : Ըսիկայ տը-

(1) Le Tungstate de soude. (2) Le phosphate de soude.
(3) Le borate de soude, կամ borax.

ղայ մի ունէր, որ իսկոյն իւր հօրը
դիակը շալկելով գնաց ի դատարան,
և անոր մահուան վրէժը կը պահան-
ջէր: Դատաւորը վճռեց որ որմնա-
դիրը տանին նստեցընեն մարդուն մե-
ռած տեղը, և որդին այն բարձր տա-
նիսն ելնելով՝ զինքը վար մարդուն
վերայ գահավիժէ և սպաննէ զանի-
կայ, և այսպէս իւր հօրը մահուան
վրէժը առնէ: Տղան երբոր այս լսեց
սարսափեցաւ և իւր դատը թողլով
հեռացաւ անկէ:

Խոհեմութիւնը կը պահանջէ որ
եղած վտանգը եղած համարելով, գա-
լիքին դիմացն առնելու փոյթ տարուի:

— Գիւղականի մի մինը մեռնելով
տարին թաղեցին, և երբ իւր էրիկը
լալով ետ կը դառնար, հանդիպե-
ցաւ իրեն ծաղրածու մարդուն մէ-
կը ու հարցուց թէ, ինչո՞ւ այնպէս
կողկողալով կու լար: Պատասխան
տուաւ գիւղականը իրենց լեզուին
ոճովը ու ըսաց թէ, կինս կորսնցուցի
անոր համար կու լամ: — « Հաւա-
տա, եղբայր, որ ես չգտայ զինքը,
կրկնեց ծաղրածուն »: Գիւղականը
միամտութեամբ դարձաւ ըսաց. « Այ-
սպէս, բարեկամ, այլ մեռաւ ը-
սել կ'ուզեմ, որոյ թաղումէն ետ կը
դառնամ, և որովհետեւ խիստ հա-
մեստ ու այրասէր էր, վասն որոյ ան-
մխիթար ցաւօք կու լամ: — Պատաս-
խանեց ծաղրածուն. « Ուստ կ'ըսես,
եղբայր, թէ որ համեստ ու այրասէր
ըլար, զքեզ չէր թողուր երթայր:

միս առաջ փութալ հրատարակելու
Լյժմիածնի Ս. Լ. թուոյն ձեռագիր
գրոց Սայր ցուցակի տպագրութիւնը,
բայց կարծելով թէ անշուշտ անոր
հրատարակութիւնը արդէն ծանօթ
է ազգիս բանասիրաց, մանաւանդ ե-
թէ արդոյ խմբագրաց, զանց առած
էինք: Յաւ եղաւ մեզ, երբ լսեցինք
որ այսպիսի կարեւոր հրատարակու-
թեան մի լուրը Յ տարիէն յետոյ օ-
տար լրագրէ մի առնելով՝ գանգատա-
նօք կը հրատարակեն իրենց թերթե-
րուն մէջ: Յիշեալ Սայր ցուցակը
որ 2,340 և ոչ 3000 հատոր գիրք կը
պարունակէ, տպեալ է ի Թիֆլիզ
Ներսիսեան ազգային տպարանին մէջ
1863 ին՝ ծախիւք Կարինեան պատ-
ուելի Յակօբ վարժապետի: Յառա-
ջաբանութեան մէջ կը խօսի նա ինքն
Կարինեան, թէ հանգուցեալ Սրբա-
ղան Կաթողիկոսը թանգարանին բա-
րեկարգութիւնը մասնաժողովի մի յանձ-
նած ըլլալով, որոյ անդամք եղած են
Գեր. Լնդրէաս եպիսկոպոս Վեհա-
պետեան, Լ. Բ. Գանիէլ վարդա-
պետ Հահնաղարեանց, Սուբիաս վար-
դապետ, և քանի մի ուրիշ անձինք.
սոյն ժողովքն ալ Լ. Բ. Գանիէլ վար-
դապետին յանձնած է պատրաստելու
բոլոր գրեանց ցուցակը. որ թէպէտ
եւ ունի իւր թերութիւնները, սա-
կայն մեծադոյն գովութեան արժա-
նաւոր աշխատութիւն մի ըլլալը չու-
րացուիր: Լ. մեն. Լոսայի Պատրիար-
քը Ս. Լյժմիածնէ վերագործին բա-
ւական օրինակներ հետը բերած ըլ-
լալով, քանի մի հատ եւս ի Պօլիս ըն-
ծայած էր բարեկամաց, վասն որոյ
մեզ քիչ զարմանք պատճառած չէ ա-
նոր տպագրութեան լուրը Լ. թիւր-
քի լրագրէն առնելով ազգային մի քա-
նի թերթերու մէջ հրատարակուիլը:

ԾԱՆՈՒՅՈՒՄՆ

Քաղցր պարտաւորութիւն կը հա-
մարուէր Սիօնի գէթ ասկէ վեց ա-